



ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 16-ին Վարդենիսի Ս. Աստվածածին եկեղեցում Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը, ս. պատարագի ընթացքում, կատարեց Մայր Աթոռի հոգեվոր ճեմարանի շրջանավարտ Արամայիս սարկավագ Հունանյանի քահանայական ձեռնադրությունը:

Սեպտեմբերի 15-ին, Երևանի Ա. Սարգիս եկեղեցում, երեկոյան ժամերգության ժամանակ, կատարվեց բարեշնորհ սարկավագի «Կոչումն քահանայութեան» հանդիսավոր արարողությունը:

«Նայեաց ի մեզ» շարականի ողեկցությամբ դեպի ատյան են առաջնորդվում ձեռնադրող Ս. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը և Արամայիս սարկավագ Հունանյանը: Այնուհետև խարտավիլյակ Ս. Բարսեղ քահանա Ղազարյանը, ինչպես թելադրում է Ձեռնադրության Մաշտոցը, հայցում է. «Հայր սուրբ, խնդրե՛ ի քե՛ն մայրըս մեր սուրբ Եկեղեցի զի ձեռնադրեսցես զԱրամայիս սարկավագս, զոր ընծայե՛ քեզ, յաստիճան քահանայութեան»: Այնուհետև կատարվում է քահանայացուի հոգևոր-իմացական պատրաստության քննությունը: «Կոչումն քահանայութեան» արարողության ավարտին Արամայիս սարկավագը հանդիսավորությամբ արտասանում է Ա. Գրի-

գոր Տաթևացու «Հավատո խոստովանությունը»:

Հոկտեմբերի 16-ին, կիրակի օրը, Վարդենիսի Ս. Աստվածածին եկեղեցում սկսվում է ս. պատարագը: Օրվա պատարագիչն է Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանը:

Եկեղեցու խնկարույր կամարների ներքո հավաքված Վարդենիսի հավատացյալները բարեպաշտական զգացմունքներով հետևում են արարողության ընթացքին:

«Ձի ողորմած և մարդասեր ես Աստուած» աղոթքի ժամանակ խարտավիլյակ Ս. Բարսեղ քահանա Ղազարյանը Արամայիս սարկավագին ծնրադիր առաջնորդում է Ավագ սեղան: Այնուհետև, դառնալով դեպի ժողովուրդը, քահանայացու սարկավագը ձեռամբարձ հրաժարվում է աշխարհից՝ կոչվելու համար «...ի սարկաւագութենէ ի քահանայութիւն, սրբոյ եկեղեցոյ ի սպասարութիւն՝ ըստ վկայութեան անձին իւրոյ և ամենայն ժողովրդեան»: Ապա Արամայիս սարկավագը միշտ ծնրադիր մտնում է ձեռնադրող սրբազանի աթոռին: Սրբազանը իր ձեռքը դնում է նրա գլխին՝ արտասանելով «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա, և դուք ամենեքեան ալօթս արարե՛ք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ

Տեառն Աստուծոյ» աղոթքը: Նորընծային շնորհվում է քահանայական փիլոն, սաղավարտ, փորուրար, շուրջատ: «Ընդհանուր խորին» շարականի երգեցողության ծամանակ մի պահ փակվում է խորանի վարագույրը, որի ընթացքում նորընծան զգեստավորվում է: Ապա բացվում է վարագույրը, և շարունակվում է ս. պատարագը մինչև «Ողջոյն տուք միմեանց»-ը:

Օծման խորհրդավոր պահն է: Հնչում է «Ամեն: Այլուիս, այլուիս» շարականը, և Գարեգին եպիսկոպոսը ս. մեռոնով օծում է նորընծայի ճակատն ու ձեռքերը՝ նրան վերանվանելով Ս. Արամ քահանա: Այնուհետև նորընծան, դառնալով դեպի ժողովուրդը, տալիս է իր անդրանիկ քահանայական օրհնությունը՝ «խաղաղութիւն ամենեցուն»:

Օծման սրբազան արարողությունից հետո Ս. Գարեգին եպիսկոպոսը նորընծային է ուղղում մի քովանդակալից խրատական՝ բացատրելով քահանայական կոչման վեհությունը, քահանայի պատասխանատվությունն ու պարտականությունները, միաժամանակ հույս հայտնելով, որ նա իր քահանայական գործունեության ընթացքում միշտ հավատարիմ կմնա իր ուխտին և միշտ քարձր կպահի հոգևորականի վեհ և անփրական կոչումը:

ՆՈՐԱՅՐ ԲԱՀԱՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ս. ԱՐԱՄ ԲԱՀԱՆԱ ՀՈՒՆԱՆՅԱՆ

Ծնվել է 1964 թ. հոկտեմբերի 19-ին, Վարդենիս շրջանային կենտրոնում:

1971—81 թթ. սովորել է տեղի Վ. Համբարձումյանի անվան N 1 միջնակարգ դպրոցում և ավարտել այն:



1981 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1983—85 թթ. ծառայել է սովետական բանակում:

Ջորացրվելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

1988 թ. մայիսի 10-ին, Քրիստոսի Համբարձման տոնին, ձեռամբ Ս. Հուսիկ արքեպս. Սանթրոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Այժմ քահանայագործության է նշանակված ՀՍՄՀ Վարդենիսի Ս. Աստվածածին եկեղեցում:

